

տեղիքը. «Եւ գտաւ պատմութիւնս համա-
նոս... եւ եղաւ ի գիրքս որ կոչի Քարթլիս
Յիօրեպա, որ է Պատմութիւն Քարթլայ. եւ
եղիա գաս Ջուանբեր (կարգա՝ Ջուանբեր),
գրեալ մինչեւ ցՎախթանգ թագաւոր, եւ
մինչեւ ցայս վայր ինքն յաւել Ջուանբեր»
(էջ 104): Առ այս կը գրէ Ի. Արուլաձէ
(էջ 34). «Այս յիշատակարանից չի երեւում,
որ ամբողջ Քարթլիս Յիսովբերայի հեղինակը
Ջուանբերն է եղել. ընդհակառակը, նրան
միայն մի մասն է վերագրվում: Յիշատա-
կարանի մէջ մատնանշած «Պատմութիւն հա-
մառոս»ը ոչ թէ Քարթլիս Յիսովբերային,
այս ինքն Վրաց Պատմութեան է վերաբե-
րում, այլ Արշիլի Վկայարանութեան գրքին
եւ այդ պատճառով էլ չի կարելի արդարացը-
նել հրատարակիչ Ա.Թ. Թիրոյեանին այն բանի
համար, որ նա հրատարակած գրքին տվել
է վերոյիշեալ վերնագիրը»:

Վրական բնագիրը, որմէ կատարուած է
թարգմանութիւնս, եղած է խուցուրի (հայ.
բոլորգիր) գրով. ասոր հետեւութեամբ է,
որ թարգմանիչը յատուկ անուններու տա-
ռագարձութեան ժամանակ յաճախ շփոթած
է վր. բ եւ շ իրարու շատ նման գրերը. ասիկէ
ծագած են Արքակ (Արչակ), Արտաքիր (Ար-
տաչիր), Ջուանբեր (Ջուանչեր) եւ այլ սխա-
լածեւերը, անուններ, որոնք իրեն պէտք է
ճանօթ ըլլային Հայոց Պատմութեան:

Շատ տեղեր վրական յատուկ անուններ
փոխանակ տառագարձութեամբ տալու հայա-
ցուցած է բառական թարգմանութեամբ.
այսպէս վրաց. Տկէ-Տբա անունը թարգ-
մանած է «Լիճ Մայրոյ» (9). Դեղա-ցիխէ
«Մայրաբերդ» (20) եւն. այլուր «Ուփլիս-
ցիխէ որ ասի Տեառնբերդ» (20), «Յիխէզիդ,
որ է Բերդ մեծ» (20): Վրացերէն չրդի-
նոէթի, որ կը համապատասխանէ «հիւսիս»,
հիւսիսային կողմանք» ասութեան, կը թարգ-
մանուի բառական «ձմակային երկիր» (19)
եւն: Տեղ տեղ կը հանդիպինք նաեւ վրա-
ցերէնէ փոխ առնուած բառերու, զորոնք
հաւաքած եւ մեկնած է Շ. Աճառեան:

Վրական սկզբնագիրը, զոր «համառոտ»
որակած է տեղ մը, կ'երեւայ թէ թարգմա-
նիչն իր կարգին համառոտած է տեղ տեղ,
աւելի ուշագիր պատմական բովանդակու-
թեան քան ճոռոմարան աւելախօսութեան,
որով հարուստ են գէթ այժմեան վրական
օրինակները: Կարեւոր տեսած է այս համա-
ռոտութիւնը մասնաւորապէս այնպիսի տե-

ղեր, ուր սկզբնագրի բառական թարգմա-
նութիւնը անհաճոյ կարող էր ըլլայ հայ ըն-
թերցողներուն: Մանր յաւելումները հայ
աւանդութենէն եւ մատենագրութենէն, ար-
դիւնք համարելու է իր հայրենասիրութեան:

Հայ թարգմանութեան կարեւորութիւնը
չեչտած է Մ. Բրոսէ (Hist. XXVII) եւ նոյնը
կը հաստատեն վրացի բանասէրները. Վրաց
Պատմութիւնը կը ներկայացնէ Քարթլիս
Յիսովբերայի մէկ հին ձեռագիրը. այս պատ-
ճառաւ ալ արժանի համարեցաւ Բրոսէ ամ-
բողջութեամբ թարգմանելու գաղղիերէնի.
«Այս թարգմանութիւնը ինձի շատ օգնեց,
կ'ըսէ Բրոսէ, վրացերէն բնագրի ճշգրիտ
իմացման համար»: Սկիզբի մասը Պատկա-
նեան թարգմանեց ուսուցիչնի, իսկ Յ. Արու-
լաձէ (1901) եւ Ս. Կակարաձէ (1908) կա-
րեւոր տեսած են ամբողջը գրաբար վրացե-
րէնի թարգմանել (Մեղիքսեթ-Բեկ, էջ 132):
Իր կարգին Լ. Մելիքսեթ-Բեկ հայ թարգ-
մանութիւնը բաղդատութեան գնելով վրա-
ցերէն բնագրի հետ, տուած է տարբերու-
թիւնները հայերէն թարգմանութեամբ (անդ,
էջ 140—224) ճոխացնելով յառաջարանական
տեղեկութիւններով եւ բացատրական ճանօ-
թութիւններով:

Այս տեղ կը ներկայացնեմ այն բոլոր
գրուածքները, որոնք չօչափած են «Վրաց
Պատմութեան» հայերէն ձեռագիրներն եւ
առ հասարակ հայերէն թարգմանութիւնը եւ
յարակից խնդիրները:

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

1. M. Brosset, Des sources originales
de l'histoire de Géorgie. Chronique de Wak-
tang. Ancienne traduction abrégée, en ar-
ménien: Journal de S. Pétersbourg, 1847,
Nr. 249—250.

2. M. Brosset, Rapports sur un voyage
archéologique dans la Géorgie et dans l'Ar-
ménie, exécuté en 1847—1848. 1re livraison
(troisième rapport) S. Pétersbourg 1849,
p. 62—63.

3. M. Brosset, Chronique Arménienne:
Additions et Eclaircissements à l'Histoire
de la Géorgie. S. Pétersbourg (Hist. de la
Géorgie) p. XVII—XXVII 1851, pp. 1—61.

4. К. Паткановъ, Ванскіе надписи
и значение ихъ для исторіи Передней
Азіи. О древней грузинской кронике:
Журналъ Мин. Нар. Просв. 1883, де-
кабрь, стр. 199—274. Ք. Պատկանեան,
Վանի արձանագրութիւնները եւ նոցա նշա-

նակութիւնը առաջաւոր Ասիայի պատմու-
թեան համար. թարգմ. Ս. Յովհաննիսեան,
Արձագանք 1885, Թ. 25, 26. 1886, Թ. 1,
2, 5—7, 9—10:

5. Н. Марръ, Сборники притчъ Вар-
дана. Часть III, Приложенія. Պետերբուրգ
1894, էջ 55—57:

6. Н. Марръ, Изъ лѣтней поѣздки
въ Арменію. VII: Зап. Вост. Отд. Имп.
Рус. Археолог. Общ. V (1890) 211—241.
= Ն. Մար, Ամառնային ուղեւորութիւնից
դէպի Հայս. թարգմ. Ս. Անտիեան, Վիեննա
1892, էջ 21—22 (Հանդ. Ամս., 1891, էջ
266):

7. F. C. Conybeare, The Armenian ver-
sion of Djouansher: Life of St. Nino, p.
67—89 (անգլիերէն թարգմանութիւն Ս.
Նունէի Վարքին):

8. Յուսաին Արուլաձէ, Վրաց Մատենի
հին հայերէն թարգմանութիւնը. Մոզգաու-
րի ամսաթերթ 1901, Թ. 4 (վրացերէն):

9. Իւ. Ջաւախիշվիլի, Հին վրացերէն
պատմական գրականութիւն, Ա. հատոր
1916 (վրացերէն):

10. Եղիա Ս. Քասունի, Վրաց ժամա-
նակագրութիւնը: Հանդ. Ամս. 35 (1921),
493—501, 584—598. 36 (1922), 121—131:

11. Լ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբիւր-
ները Հայաստանի եւ Հայերի մասին, Ա.,
Երեւան 1934, էջ 129—224:

12. Ի. Արուլաձէ, Քարթլիս Յիսովբե-
րայի կամ Վրաց Պատմութեան հին հայերէն
թարգմանութիւնը: Հայկական ՍՍՌ Ժող-
կամասիկաին կից Պետական Ձեռագրատուն
(Մատենադարան): Գիտական նիւթերի Ժո-
ղովածու, Թ. 1, Երեւան 1941, էջ 31—40:

13. Շ. Աճառեան, Հայերէն նոր բառեր
Ջուանչերի Վրաց Պատմութեան մէջ. Բագ-
մաՎէպ, 1921, էջ 353—354:

14. Յ. Մարկուարա, Բազրատունեաց
ճաղուճը. Վիեննա 1915 (Վրական Բազրա-
տունեաց ճաղուճը, էջ 74—150):

15. Շ. Ն. Ակինեան, Կիւրիոն Կաթողի-
կոս Վրաց. Վիեննա 1910:

16. Նոյն, Մատենագրական հետազոտու-
թիւններ, Գ., Վիեննա 1930, էջ 34—40:

17. Նոյն, Քրիստոնէութեան մուտքը
Հայաստան եւ Վրաստան եւ Ս. Նունէ: Հանդ.
Ամս. 1947—1948:

Շ. Ն. ԱԿԻՆԵԱՆ

ԲԱՐՁՐ ՀՆՏՔԻ ՎՆՔԵՐԸ

(Շարունակութիւն):

Բ.

Բարձր Հայքի Եկեղեցի գաւառը, ապա
իր գլխաւոր քաղաքին անունովը կոչուած
Երզնկա, սահմանակից է Բարբրդի, Մանա-
նաղիքի, Դարանաղիքի եւ Դերջանի: Ստէպ
ենթարկուած է երկրաշարժի եւ ասպատա-
կութեան:

1. ԱԿՆՁԻ ՎԱՆԹ

Ծանօթ է հետեւեալ յիշատակագրու-
թեանէն.

«Զվերջին կազմող Աստուածաշունչ
գրքիս գտէր Կիրակոս արեղայս եւ Յակոբ
գրոց աշակերտս... (յիշեցէք): Կազմեցաւ
գիրքս ի դառն եւ ի նուրբ ժամանակիս վասն
անաւրէն Տաճկացն, անողորմ կողոպտէին
գրքիստոնեայքս, աւրն անգամ մի ի յայրս եւ
ի ծերպս վիմաց փախաք, հազիւ կարացաք
հանել գգիրքս, թվ. ՌՆԸ (1599) յԵկեղեցի
գաւառն ի յԱկրնջին վանքն, ի տէր Կիրակոս
հարպէտին եւ այլ միւրանիցն. ամէն» (Ակի-
նեան, Հաւաք. Յիշատ. էջմ. 2063, Քարո-
գագիրք Գր. Տաթեւացոյ):

2. ԱՆԱՐԾԱԹ ԲԺՇԿԱՅ ՎԱՆԹԸ

Երզնկայի¹ վանքերէն է Անարծաթ
Բժշկաց վանքը, որ կառուցուած է Քէմա-
խէն մէկ ժամ հեռու՝ Մարեք գիւղի մօտերը:
Դժբախտարար վաղուց շարաթացած (Գր.
Դարանաղի, ժամանակագրութիւն, էջ 161.
Ծագիկ, 1899, Թ. 54 եւ 79. Բիւզանդիոն,
1902, Թ. 1680. Գ. Սիւրմէնեան, Երզնկա,
էջ 10: Դատուած է նաեւ Քէմախի վանքերու
շարքին մէջ:

3. ԱՌԱՔԵԼՈՅ ՎԱՆԹԸ

Այս անունով վանք մը կը յիշուի Երզն-
կայի մէջ, սակայն անդրադոյն տեղեկու-
թիւններ կը պակսին: Շատոնց շարաթացած
վանքերու շարքին մէջ մտած (Ղազանճեան,
Խառն նամակներ, էջ 26, Բիւզանդիոն, 1898,
Թ. 351 եւ 1902, Թ. 1644, Սիւրմէնեան Գ.
Երզնկա, էջ 105 եւ Ծագիկ, 1899, Թ. 79):

¹ Երզնկայի առաջնորդները միանգամայն վանքե-
րու վերին առաջնորդներն էին: — Վիենն. Միթիա-
րեանց Մատենադարանին Թ. 703 Ձեռագիր նամակա-
նին նախորդ գորու մէջ (առաջին կէսին) կը յիշէ
Կարապետ, Պօղոս եւ Ղազար առաջնորդները (էջ 78
եւ 136):

4. Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ԿԱՄ ԶԱՐԽԱՓԱՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆՔԸ

Երզնկայէն երկու ժամ հետո, Զախըրման գիւղի քովերը: Անշուք (Բիւզանդիոն, 1902, թ. 1614. Արեւել. Մամուլ, 1890, էջ 76. Նաթանեան, Արտուր Հայաստանի, էջ 58. Սիւրմէնեան, Երզնկա, էջ 104):

5. ԵՐԿԱՆԻ Ս. ԳԵՈՐԳԻ ՎԱՆՔԸ

Երզնկայէն երկուքուկէս ժամ հետո եւ անոր հարաւային կողմը, Երկան եւ Կեղնիք գիւղերու մերձ, Մրձուր լեռան քով «ի ստորոտս Տուֆիկ լեռանց» (Բիւզանդիոն, 1897, թ. 317. 1902, թ. 1644. Մասիս, 1886, թ. 1841. Ղազանճեան, Սառն նամակներ, էջ 25. Նաթանեան, Արտուր Հայաստանի, էջ 158. Արեւել. Մամուլ, 1891, էջ 208—209): Ունեցած է երկու տաճար, մէկը՝ Տիրամօր եւ միւսը՝ Ս. Գէորգի նուիրուած (Արեւել. Մամուլ, 1887, էջ 437—438):

Յովհաննէս երէց 1342ին գրուած Տօմարագիրքը մը կը նուիրէ Ս. Գէորգի. «Ես Յովանէս երէցս սուրբ Եհնոյ որ ավի գտուծա(ր) գիրքս յիշատակի ի յերկանին վանքն, ի դուռն սուրբ Գէորգայ եւ սուրբ Աստուածածնին, յիշատակի իմ հոգւոյս եւ ծնողացն Կարապետին եւ Քարամ խաթունին» (Ակինեան, Հաւաք. Յիշատ. էջմ., 1973. հմմտ. Կարենեան, Յուլ. հայ. Ձեռ. էջմ. թ. 198):

Հոս ապրած է ժամանակ մը անուանին Կիրակոս վարդապետ. «Գրեցաւ գիրքս այս ի գաւառն Եկեղեցայ ի վանսն, որ կոչի Երկանի, յորում է մեծ եւ հռչակաւոր վարդապետն Կիրակոս...» (Մարգրիտեան, Մայր Յուլ. հայ. Ա., էջ 160): Նմանապէս հոս ապրած ու գրական աշխատանքի նուիրուած է Մխիթար Երզնկացին (հմմտ. Հանդ. Ամս. 1915, էջ 64—69):

Դարձեալ Երկանի մէջ բնակած է Վրթանէս վարդապետը, որմէ են հետեւեալ տողերը. «Վրթանէս վարդապետս ի թվին 229 հեղայ արեղայ եւ շինեցաք զմեծ ժամատուն, Բ. տարի կեցա(յ) ի վանքն եւ անտի գնացի ի Դերջան ի մեծ Մաղաքիա վարդապետին վանքն եւ աշակերտեցայ նմա ի թվին 2 եւ իննսուն եւ երկուսն: Մաղաքիա վարդապետն շինեաց զՄուրենու խան, զի աւեր էր, եւ նայ նորոգեաց: 2 իննսուն եւ Գ. (1445) Մաղաքիա վարդապետն փոխեցաւ առ Քրիստոս եւ եթող մեզ սուգ անմխիթար ի վերայ երկրի: 2ի բազում աշակերտ անմխիթար եւ

որը մնացաք ի սուրբ հօրէն մերոյ: Եւ անտի ելեալ գնացի ի Կեղի ի մեծ վարդապետն որ մականունն Եիրաք ասի եւ կեցայ անդ Գ. տարի եւ անտի ելեալ գնացի ի մեծ ուխտն ի Սարտիչար առ մեծ վարդապետն Մեսրոպ, եւ նա եւս առ Աստուած փոխեցաւ: Եւ անտի ելեալ գնացի ի Սերաստիայ եւ կեցայ տարիմ: Եւ առի գաւազան ի թվին Հոյոց ՌԳ եւ հեղայ դարձեալ ի սուրբ ուխտս, որ ասի Երկանի վանք եւ վճարեցի իՔի պարտք եւ դարձեալ գնացի ի Տիվիկի եւ շինեցի զԿուսասու վանաց եկեղեցին եւ դարձեալ հեղայ ի վանքս եւ շինեցաք զլերի սարիսպն եւ գնեքին պարիսպն, զշվաքն եւ դատրիտուն, զեկեղեցին եւ զժամատուն այլ շինեցաք եւ դարձեալ գնացի Երուսաղէմ ի թվին ՌԺԸ» (Ակինեան, Հաւաք. Յիշատ. էջմ. 2145):

Երկանի վանքը շատ միաբաններ ունեցած է եւ հռչակ հանած (Արեւել. Մամուլ, 1887, էջ 438): Գր. Դարանաղցին «մէկ ամսորեայ սուղ ժամանակ» հոն կը կենայ եւ քսանուչորս-քսանուկեց վարդապետի գերեզման կը տեսնէ գաւիթի մը մէջ, ուր թէեւ կրակ կ'իջնայ, սակայն գերեզմաններն անկոծ կը մնան: Անոր վկայութեանը համաձայն Երկանի մէջ շատ ձեռագիրներ եղած են (Ժամանակագրութիւն, էջ 403 եւ 510. հմմտ. եւ էջ 408): Վանքին մէջ կային նաեւ 15—20 սենեակ: Ունէր սնտեստուն, ախոռ եւ գրեթէ 50 արտավար հող (Բիւզանդիոն, 1902, թ. 1644. հմմտ. եւ 1897, թ. 336): Անոր խնամակալութիւնը ժամանակ մը Երզնկայի պղնձագործները յանձն առած էին եւ սղտաքերը կը հայթայթէին (Սիւրմէնեան, Երզնկա, էջ 91):

6. ԳԱՌՆԻԿ ՃԳՆԱՒՈՐԻ ՎԱՆՔԸ

Երզնկայի Տաճրակ եւ ձրդնի գիւղերու մերձ՝ լեռան մը ստորոտը: Հանգած (Արեւել. Մամուլ, 1890, էջ 75. Ծաղիկ, 1899, թ. 79 եւ Բիւզանդիոն, 1902, թ. 1614):

7. Ս. ԵՂԻԱՅԻ ՎԱՆՔԵՐԸ

Երզնկայի շրջակայքը Ս. Եղիայի նուիրուած երեք վանք կայ. առաջինը՝ Կեղզուտի մէջ, երկրորդը՝ Հանդիսի մէջ եւ երրորդը՝ հաւանականաբար «Ս. Կիրակոսի կամ Երկան գիւղի Ս. Գէորգայ վանուց մօտերը» (Բիւզանդիոն, 1898, թ. 351. 1902, թ. 1644. Արեւելք, 1895, թ. 3362 եւ Ղազանճեան,

Սառն նամակներ, էջ 26. հմմտ. Սիւրմէնեան, Երզնկա, էջ 104, Ս. Եղիա եկեղեցին «Քառասուն Սաչեր» ու մօտ): Երեքս ալ հանգած կամ շարաթացած:

8. ԵՐԻՋԱՅԻ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆՔԸ

Ծանօթ է քանի մը յիշատակագրութիւններէ: ՉԻԱ. (1272) թուին «ի վանս Երիզա ի դրան Ս. Աստուածածնիս ընդ հովանեաւ Սուրբ Լուսաւորչիս ի յառաջնորդութեան եւ ի հայրութեան Գորգա» Գրիգոր Աւետարան մը կը գրէ (Հանգէս Ամս. 1924, էջ 514): Հետեւաբար Երզնկայի հին վանքերէն է²:

Քանի մը տարի յետոյ (1296) Բանարգէս «ի յանապատիս Երեզ կոչեցեալ ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս եւ սրբոյն Գրիգորի Հայաստանեայց Լուսաւորչին շարձանաց տեղիս» կը գրէ Մանրուամունք մը (Baronian-Conybeare, Cat. Arm. Manus. Bodleian library, էջ 123):

Ապա բաւական երկարատեւ լուծիւն: Բայց 1431ին հոն կը գրուի Ոսկեփորիկ մը. «Արդ... գրեցաւ... յանապատիս որ կոչի Երէզ ի դուռն սուրբ Աստուածածնիս... յիշեցէք զհոգեւոր հայրն մեր զտէր Յովանէսն, որ նոյ այլ շատ աշխատեցաւ ի գիրս եւ փոխեցաւ յանանց կեանքս: Յիշեալիք եւ զայժմուսս առաջնորդս զտէր Ստեփանոս զհոգեւոր հայրս մեր. յիշեալիք եւ զգաւս կրօնաւորաց, որ աստ կան հաւաքեալ... յիշեցէք եւ զողորմելի գծողս զՂազար արեղայս եւ զհայրն իմ զԱմիւշան, զմարիկն իմ, զսարկաւաք եղբայրն իմ, որ փոխեցաւ առ Քրիստոս եւ զմիւս եղբայրն իմ զԱստուածատուրն... Յիշեցէք զՄկրտիչ աւագ երէցն եւ զիւր որդին զՅովհաննէս աւագ էրեցն եւ զփոխեցեալն առ Քրիստոս՝ զՅովհաննէսն, որ մականունն թաթար կոչի եւ յիշեցէք զՇնոֆորն, որ զգիրքս գրել երեւո» (Ակինեան, Հաւաք. Յիշատ. Ձեռ. էջմ. թ. 944):

Աւետարան մը կը գրուի «ի մայրաքաղաքս Երզնկայիս ի վանքս որ կոչի Երեզի Աստուածածնի, որ է տեղի շարձարանաց սրբոյն Գրիգորի մեր Լուսաւորչին» (Մարգրիտեան, Յուլ. հայ., էջ 626—628):

² Յայտնաւորքի մէջ կ'աւանդուի. «Շինեաց սուրբն Գրիգոր զտեղի կոչոյն Անահատ եկեղեցի յեկեղեաց գաւառն, ի գիւղն Երեզս, անուն Ս. Աստուածածնին» (Տաշեան, Յուլ. հայ., էջ 26):

9. Ս. ԹԱԴԵՆՈՒՅ ՎԱՆՔԸ

Երզնկայի հարաւային արեւելեան կողմը, Տանձիկ կամ Տանձիկ գիւղին մէջ, ուստի եւ Մանանաղեաց գաւառի վանք պէտք է համարիլ: Աւանդութեան համաձայն առաքելաչէն եւ այն՝ Ս. Թադէոսէն հիմնուած (Սիոն, 1927, էջ 69 եւ Բիւզանդիոն, 1902, թ. 1644): Նախորդ դարուն երկրորդ քառորդին անոր մատակարարն էր տէր Յարութիւն քահանան (թ. 703 Ձեռագիր Վիենն. Մխիթարեանց Մատենադարանին, էջ 98): Ապա շարաթացած վանքերու ցանկին մէջ կը մտնէ: Բայց 1895ին Վարդան վարդապետը կը ցանկայ զայն վերանորոգել (Հայրենիք, 1895, թ. 1226): Սոյն տարին կառավարական գործերը վանքը կը կողոպտեն եւ Յուսիկ վանահայրը կը տանջեն (Նոր Դար, 1895, թ. 158):

10. Ս. ԹՈՐՈՍԻ ԿԱՄ ՊԱՂԱՊՈՒՐԻ ՎԱՆՔԸ

Երզնկայի հիւսիսային կողմը, Ախորճը գիւղի մօտ (Պալեան, ի «Բիւզանդիոն», 1902, թ. 1644. Արեւելք, 1895, թ. 3362): Կոչուած է Պաղ ապուրի վանք, վասն զի Մեծ Պահոց առաջին եօթնեկին շարաթ օրը հոս կ'այցելէին ուխտաւորները եւ միմիայն պաղ ապուրով կը գոհանային (Արեւելեան Մամուլ, 1890, էջ 77): Արդեօք ա՞յս վանքը կ'ակնարկէր Սիմէոն գրիչ, երբ 1351ին Աւետարան մը կ'արտագրէր՝ «առ դրան Հայրապետ երիցու եկեղեցւոյն, սրբոյն Յակոբայ եւ սուրբ Թորոսու» (Սրուանձտեանց, Թորոս Աղբար, Բ., էջ 356):

11. ԻՇՈՂԻ ՎԱՆՔԸ

Երզնկայի մէջ: Հաւանականաբար՝ նոյն Ծոխայ կամ Ծողակաթ Ս. Աստուածածնի հետ: Ծանօթ հետեւեալ տողերէն.

«Փառք... որ զօրացոյց զիս զնուաստ եւ զանիմաստ մեղուցեալ ծառայս անպիտան զԿարապետ արեղայս հասանել ի վերջին գիծ բազմայժողով տառիս եւ ծաղկաւէտ Բուրաստանիս (Մաշթոցիս) շարադրեալ յիմաստնոց: Արդ յայս ամի յորում թուականն էր Հայոց ՊՁԹ (1440) ամին եղեւ զբազրուութեան աստուածաշունչ տառիս, որ Մաշտոց կոչի, ի գաւառս Երզնկոյ ի վանս որ Իշողի վանք կոչի առ ոսոս սուրբ Աստուածածնիս ի յառաջնորդութեան վանիցս Մկրդ-

ախ կրօնաւորի, որ յայտ ամի հարպետ եղեւ եւ ժողովեաց հոյով կրօնաւորս եւ յոյժ կ'աշխատի...» (Ոսկեան Հ. Հ., Յուլ. հայ. Ձեռ. Մատ. Մխիթ. Ի Վիեննա, Բ., (անտիպ), Թ. 600, թղ. 215ա):

Այս վանքին ինչպէս հիմնարկութեան, նաեւ ուրիշ ամէն բանի պարագաները կը մնան մթութեան մէջ թաքուն (Բիւզանդիոն, 1900, Թ. 1103):

12. ԹԻԼԻՍԻ ԿԱՄ ԹԻԼ ՎԱՆՔԸ (ԿԱՄ ԶՈՒԽՏԱԿ ԷԱՅՐԱՊԵՏԱՅ ՎԱՆՔԸ)

Եկեղեցաց գաւառի Թիլի կամ Թիլ աւանը Հայաստանի սրբավայրերէն եղած է: Հեթանոսութեան շրջանին հոն կը յարգուէր ու կը մեծարուէր Նանէ կամ Աթենաս (Ագաթանգեղոս, Պատմ. Հայոց քննական հրատ., էջ 410, Մ. Խորենացի, Պատմ. Հայոց քնն. հրատ., էջ 127 եւ Կարբէր Ա., Հեթանոս Հայաստանի ութ մեհեաններն Ագաթանգեղոսի եւ Մ. Խորենացու համեմատ, Վիեննա 1899, էջ 18, 24 եւն):

Իսկ քրիստոնէաներու համար Թիլի աւանը սիրուած վայր կը դառնար, վասն զի հոն կ'ամփոփուէին Ս. Արիստակէսի եւ Ս. Ներսէսի³ աճիւնները:

Հոս «ի Թիլի աւան յեկեղեցոջն, որ յանուն Ս. Հայրապետացն, որ էր անդ սարկաւազ մի ի դործ սպասաւորութեան վանիցն, հեղ եւ հանդարտ վարուք Պատուական կոչեցեալ անուն» (վանքին Ներսէս առաջնորդին օրով) կ'ունենայ տեսիլ մը, որով իրեն կը յայտնուին Ներսէս Պարթևի նշխարները կամ լաւագոյնս՝ անոնց տեղը (Սովետք, է., էջ 46):

Թէ Թիլի մէջ եղած այս վանքին կամ քահանայատան իսկական անունը ինչ եղած է, կը մնայ անձանօթ: Պալեան գայն կը կոչէ «Ջուխտակ Ս. Հայրապետի վանք կամ Ս. Ներսէսի վանք» (Բիւզանդիոն, 1902, Թ. 1644): Սակայն Ջուխտակ կամ Ջոխտակ Ս. Հայրապետ է անունը այն եկեղեցոյն⁴, որ Ներսէս Հայրապետի մատուցները յայտնուէին յետոյ կը շինուի եւ ուր անոնք կը գրուին (Բիւզանդիոն, 1898, Թ. 351):

³ Ս. Ներսէս Թիլի մէջ հիմնած է եկեղեցի մը — կաթողիկէ անուն — որ Արղւհատի արշաւանքներու ատեն «քակի» (Յովհ. Մամիկոնեան, Պատմ. Տարօնայ, Վենետիկ 1889, էջ 61—62. հմտ. եւ Սովետք է., Վենետիկ 1853, էջ 44):

⁴ Թիլի եւ Շոխայի վանքի միջև — աւելի Թիլի մերձակայ — կար եկեղեցի մը, որ Ջուխտակ Հայրապետի կը կոչուէր (Սիւրբէնեան Գ., Երզնէ, էջ 105):

Ինճիճեան Թիլի⁵ գոյգ վանքեր գիտէ, որոնց մին հաւանականաբար եկեղեցոյն անունովը Հայրապետաց վանք կոչուած ըլլայ (Ստորագրութիւն, էջ 20):

«Այս (Թիլի) հնագոյն եւ ըստ ամենայն հաւանականութեան ճոխագոյն մենաստանէն, որ կառուցեալ է եղեր գեղեցկագիր դաշտի վերայ, ոչ այլ ինչ կը մնայ զարդիս, բայց միայն կամարակապ եւ քարուկիր փոքրիկ մատրան մը կրտստուլ որմերն՝ երկու երեք կանգուն բարձրութեամբ» (Արեւել. Մամուլ, 1889, էջ 311): Երուանդ եպիսկոպոսը գայն կ'անուանէ «փլտտակ վանք» (Միոն, 1927, էջ 212. հմտ. Էփրիկեան, Բնաշխ. Բառարան, Բ., էջ 36—38):

13. ԽԱՉԱԿԱՅ ՎԱՆՔԸ

Թէպէտ Տիրաչէն այլ կոչուած, սակայն տարբեր է միւս Տիրաչէն կամ Ս. Ներսէսի վանքէն: Այս է Պալեանի կարծիքը. «Սոյն Խաչկայ վանքը թէև յիշուած Տիրաչէն վանքին հետ շփոթուներ եւ երկուքը մէկ վանք նշանակողներ կան, բայց մենք ինքնին համոզուած մը գոյացուցինք, թէ ասոնք առանձին առանձին վանքեր պիտի ըլլան» (Բիւզանդիոն, 1902, Թ. 1614):

Դարանաղիքի այս վանքի մասին անդրադոյն տեղեկութիւններ կը պակին:

14. ԽՆԴՐԱՎԱՏԱՐ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆՔԸ

Մարեք զիւզին մօտ եղած է Խնդրակատար կամ աղաւաղուած ձեռով՝ Խանեկատուր Ս. Աստուածածնի վանքը, որուն հողերը, ինչպէս եւ անոր մերձ հիմնուած Անարծաթ Բժիշկի վանքին հողերը, գիւղացիները ձեռք անցուցած են (Բիւզանդիոն, 1902, Թ. 1680):

15. Ս. ԿԱԹՈՒՂԻԿԵՒ ՎԱՆՔԸ

Երզնկայէն երեք ժամ հեռու: Սրկաթաղ զիւզի մօտ: Թիլու կամ Գայլ գետի եզերքը: Հանգած (Բիւզանդիոն, 1902, Թ. 1644): Ամատեան կը գրէ. «Եկեղեցաց գաւառին Սրկաթաղ զիւզի մէջ կը գտնուի շէնք մը, որուն ինչ ըլլալը, վանք թէ եկեղեցի ըլլալն չի գիտցուիր եւ կը կոչուի Սրկաթաղ կամ

⁵ Կոյ համանուն գիւղ մը Բալուէն երեք ժամ հեռու: Ունի Ս. Խաչ անուն վանք մը (Պ. Նաթանեան, Արտոսը Հայաստանի, Կ. Պոլիս 1879, էջ 89—90. հմտ. եւ Ինճիճեան, Նոր Հայաստան, էջ 226):

Ս. Կաթողիկէ⁶» (Արեւել. Մամուլ, 1890, էջ 75):

Բաւական ձեռագիրներ կը գրուին «Ի մայրաքաղաքս յերզնկաս ընդհովանեաւ սուրբ Կաթողիկէիս աստուածարնակ տաճարիս» (Լալայեանց, Յուլ. հայ. Ձեռ. Վասպ. Թ. 93. Սարգիսեան, Մայր Յուլ., էջ 174—176 եւն), բայց անոնք եկեղեցի մը կ'ակնարկեն:

16. ԿԱՅԻՓՈՍԻ ԿԱՄ ԿԱՊՈՍԻ Ս. ՅԱԿՈԲԻ ՎԱՆՔԸ

Սրուանձտեանց կը գրէ. «Կը թողունք (Երզնկայի) դաշտը եւ բարձրանալով հասած ենք լեռան մը սիւաւառակի վրայ, յորում է Կոյ ի փոսի Ս. Յակոբայ վանքը» (Թորոս Աղբար, Բ., էջ 51), այս է՝ Երզնկայի արեւմտեան կողմը եւ անկէ երեք չորս ժամ հեռու գետակի մը մերձ, Շողակաթ լեռան գառիկերին եւ Գոհանամ լեռան ստորոտը⁷: Հիմնուած է շատ սիրուն դիրքի վրայ եւ օժտուած առողջարար կլիմայով ու հիանալի ջրով: Երջնկայից քաղաքէն եւ հաստատուելու պարսպով (Արեւել. Մամուլ, 1888, էջ 99):

Ս. Յակոբի վանքը ունեցած է գոյգ քարաչէն եւ գեղեցիկ տաճարներ՝ նուիրուած Ս. Յակոբի եւ Ս. Սիոնի (Բիւզանդիոն, 1902, Թ. 1644): Մինչ դեռ Սրուանձտեանց միայն մէկ տաճարն եւ այն Ս. Յակոբի տաճարը կը յիշէ եւ անոր համար կը հաւատէ, թէ «Գեղեցկակերտ է սուրբ տաճարն, յորում կոյ փոս մը... յաջմէ խորանին՝ առիւծ եւ ի ձախմէ՝ եզն քարակոփ խոյակաց վրայ: Իսկ դրսի շէնքերը աննշան են» (Թորոս Աղբար, Բ., էջ 51):

Ե. Բորէ, որ այցելած է Ս. Յակոբի վանքը, կը գրէ. «Հասանք սուրբ Յակոբայ վանքը, որուն համար կ'ըսեն թէ Տրդատի դարուն հասնող շինութիւն մը ըլլայ: Թէպէտ ստոյգ է, որ այս եկեղեցոյ շինութիւնը Անիի եկեղեցիներու նշանաւորութիւնը չունի, սակայն օժտուած է հին ոճով մը, որուն ձեւերն

⁶ Կոյ Կաթողիկէ գիւղ մը, ուր Աւագ վանքը ազարակ մը ունէր (Արեւելք, 1886, Թ. 853): — Սրկաթաղ աղաւաղուած է Ս. Կաթողիկէի (Արեւելք, 1895, Թ. 3362):

⁷ Բիւզանդիոն, 1897, Թ. 317 եւ 1902, Թ. 1644. Նօտաք, էջ 80. Նաթանեան, Արտոսը Հայաստանի, էջ 158. Ղազանձեան, Խաչն անուաններ, էջ 24. Յատաջ, 1911, Թ. 79. հմտ. նաեւ Մամուլ, 1888, էջ 97. Սիւրբէնեան Գ., Երզնկա, էջ 97: Կապոսի վանքը «Աեպուհ լեռանց շրջանին մէջ, Երզնկայի դաշտին տիրող բարձրագիր գագաթի մը գեղատեսիլ լեռնադաշտին վրայ կառուցուած է» (Արարատ, 1901, էջ 364):

եւ նկարապիւրը շատ գեղեցիկ չափակցութեամբ Բագրատունիներու մայրաքաղաքին մէջ ալ կը գտնենք: Եկեղեցոյ նաւը զմբէթը վեր կը բռնեն չորս սիւներ, որոնց վրայ բաւական հին թուական կրող արձանագրութիւն մը գտանք»⁸:

Իսկ Խաչատուրեան 1886ին այցելելով վանքս, կը հաղորդէ տեղեկութիւններս. «Միշտ դէպի արեւմուտք ընթանալով հասանք ժամը 1.5ին լուսաւորչակերտ Կայիփոսի Ս. Յակոբ վանքը...: Դացինք վանուց եկեղեցին, որ կը գտնուի շէնքին հարաւային կողմը: Շէնքը մատուռ մըն է անուր, որուն մէջ են Ս. Յակոբայ Մծրնայ հայրապետի ծնօտի եւ դագաթի մատուցները եւ իւր պատարագի փոքրիկ սկիհը, ասոնցմէ զատ ունի հետաքրքրաւոր ձեռագիր խաչելութեան պատկեր մը իւր հնութիւն: Եկեղեցոյ դաւթին հարաւային կողմն է այն փոսը, ուր ձգնած է սուրբ Յակոբ, ուսկից ատուած է վանքն զիւր անուն՝ Կայիփոս: Կը պատմուի թէ սոյն փոսէն մինչեւ Ջղտակ հայրապետ ժամանակաւ ներքուղի մը կոյ եղեր, բայց այժմ գոյութիւն չունի: Վանական եկեղեցոյն տաճարին երկու կողմերը քանդակուած են եզան եւ առիւծի վիմապատկերներ...: Իր գրադարանն ալ չունի հին եւ նշանաւոր գրքեր, բացի մագաղաթեայ ձեռագիր Նարեկէ մը (Արեւելք, 1886, Թ. 853. հմտ. նաեւ Մասիս, 1886, էջ 237):

Ս. Յակոբի վանքը դարերու ընթացքին քանի մը անգամ կործանուածի եւ աւերումի կ'երթարկուի (հմտ. յիշատակագրութիւնները), սակայն նորէն կը վերաշինուի: 1416ին կ'այրի, բայց կրկին կը կանգնուի: Անոր անուանի վերանորոգիչներէն է Աւետիք Պատրիարք Եւզոկիացի, որ կանխաւ հոն առաջնորդ եղած էր (Բիւզանդիոն, 1902, Թ. 1644):

Ս. Յակոբի վանքը կոչուած է՝ Կապոսի, Գարոսի, Կարոսի եւ Կայիփոսի վանք: Սովորական կոչումն է Կապոսի վանք: Անուանակոչութեան մասին կը գրէ Հ. Յակոբյոս Վ. Տաշեան. «Երբ Կայիփոս եւ մանաւանդ Կայիփոս ձեւն ընդհանրացած էին, բնական է որ արդէն սկսուած ըլլար անուան մէջ «կայ» եւ «փոս» բառերը փնտուել եւ տեղական աւանդութիւն մը կրնար այս ժողովրդական մեկնութեան նպաստել, ինչպէս կը յիշէ Սրուանձ-

⁸ E. Boré, Correspondences et Mémoires d'un Voyageur en Orient, Paris 1840, II, էջ 33):

Թեանց, որ ուղղակի «Կայ ի փոս»⁹ Ս. Յակոբայ վանք կը մեկնէ» (Թորոս Աղբար, Բ., էջ 51): Այսպիսի մեկնութիւն մը ի հարկէ խնդրէ դուրս է: Կապոս հին ձեւը հաւանօրէն ինքնին իսկ մատնանիչ կ'ընէ, թէ վանքս նախնարար շատ հին է եւ նուիրուած կ'ամ յանուն սրբոյն, որուն անունն է աղաւաղուած կ'ամ կը ճատուած, այսինքն Ս. Կալիպոսի: Արդէն սրբոյս այս համեմատարար ուղիղ ձեւն ունին մեր վկայարանութիւնք՝ Կալիպոս, բայց նաեւ Կալիպոս: Այս պարագայիս անկարելի չէ որ Կալիպոսի վանքս կապ ունենայ համանուն Կալիպոս վանքին հետ, ուր վրացի կամ վրահայ Յովնան դտած էր Բասոսի վարքը եւ որ բերուած էր արդի Թորթումի Սախուայ վանքէն, ինչպէս կ'ըսէ այն վկայարանութեան յիշատակարանին մէջ: Այս վանքին տեղն ի զուր կը փնտռեն բանասէրք, որոնք ի հարկէ նոյն իբր վրական վանք կը փնտռէին ի Պաղեստին եւ այլ տեղեր: Շատ ընական էր որ Տայք՝ հնուց ալ յաճախէին նաեւ այս կողմանց վանքերն, որոնք արդէն երկար ժամանակ իրենց պէս յունական իշխանութեան ներքեւ էին: Դժբախտարար ճիշդ այս հին ժամանակները մութ են մեր ունեցած ծանօթութեամբք, այսպիսի մանրամասնութիւնք չեն կրնար որոշուիլ: Մեր պատմագիրք յունական բաժնին, ինչպէս վրական իշխանութեան ներքեւ անցած կողմերուն մասին միայն պատահարար տեղեկութիւններ կու տան: Յամենայն դէպս եթէ չէ նոյն վանքը՝ գոնէ համանուն վանք մըն էր այս ալ: Որ եւ հին աւերման եւ յաջորդող նորոգութեան ատեն տաճարաց մին նուիրուած է Ս. Յակոբայ, որոյ անուամբ նաեւ կից նախընթացին այնուհետեւ կը յիշուի (Հմմտ. «Ընդ հովանեաւ սրբոյ Յակոբայ Կապոսի»), երբ ձեռագիրք կը սկսին յաճախել եւ տեղեկութիւններ մատակարարել: Հին անունն ուրեմն մնացած է կը ճատուելով Կապոս: Այս է կարծենք անուանս լուսադոյն մեկնութիւնը» (Տայք, անտիպ, էջ 36—37):

⁹ Տրդատ եպ. Պաղեստին թէեւ այս մեկնութիւնը անճիշդ կը գտնէ — ինչպէս է իրականին — բայց կը յաւելուէ «Անձանօթ կը մնայ թէ ինչ ըլլայ Կապոս, Կափոս, Կապոս անունը» (Բիւզանդիոն, 1902, Թ. 6144), սակայն դարեր յառաջ նոյն մեկնութիւնը կու տար Գր. Գորանաղցին՝ «Նւ Կապիփոսի ասին ըստ տեղոյ անուն է որ՝ կայ ի փոսին» (Ժամանակագրութիւն, էջ 512): Կարելի է թէ կանխաւ Ս. Գորանոսի նուիրուած է եւ յետագայի աղաւաղուելով եղած է Կապոսի:

բողով ծածկուած են: Աւանդութիւնը կայն Հայաստանի հին վանքերէն մին կը հռչակէ իսկ անոր մասին մեր ունեցած տեղեկութիւնները ուշ ժամանակներէ են: Անոր ծագումն ու զարգացումը տեղի կ'ունենայ ԺԳ.—ԺԴ. դարերուն եւ կարծես թէ ԺԵ. դարու հիմնարկութիւն ըլլայ¹⁰: Անոր միարաններէն կը յիշուի Վարդան՝ 1224ին՝ «Ի Կապոսոյն վանիցն» (Զարբհանէլեան, Մատենադարան, էջ 729): Քանի մը տարի վերջ կը տեսնենք Սամուէլ առաջնորդը որ 1255 (°)ին օրինակել տուած է Գրիգորի Ս. Աթանասի դործերէն ինչ ինչ. «Կատարեցաւ... հրամանաւ հաւր Սամուէլի եւ առաջնորդի սուրբ ուխտիս, որ Կապոսին ասի ի նոյն վանքս ի դրանն Ակորայ ձեռամբ... Գրիգոր մականունն Վզիկ» (Սարգիսեան, Յուլ. Բ. էջ 322): Ապա բաւական ժամանակ լուծուին: Ներսէս սարկաւազ Շարակնոց մը կ'արտադրէ 1343ին՝ «ընդ հովանեաւ սրբոյն Յակոբայ Կապոսի» (Տաշեան, Յուլ. Բ., էջ 489): Յակոբ Ղրիմեցին Կապոսի մէջ հռչակաւոր Գէորգ Երզնկացիի քով կ'ուսանի եւ Արքայաճամ արեղային Հաւաքածոյ մը կու տայ (Ն. Մատ., Յուլ. Բ. էջ 85, էջ 40): Գէորգ Վ. Երզնկացին՝ թէ՛ Աւագ վանքի եւ թէ՛ Կապոսի առաջնորդ եղած է. «Աւարտեցի զգիրս զայս քարոզաց... ես... Գրիգոր բանի սպասաւորս պետ կոչեցեալ... յորդորմամբ եւ նպաստաւորութեամբ բազմերախտ եւ զորովազութ հօրս իմոյ հոգեւորի եւ ուսուցչի տէր Սարգսիս բարի սիրողի եւ քաջ երաժշտապետի...: Արդ գրեցաւ սա ի սուրբ մենաստանիս, որ յորջորջեալ կոչի Կափոսի, ընդ հովանեաւ սուրբ Յակոբայ սքանչելազործ հայրապետին Մըծբնայ, ի յառաջնորդութեան սուրբ ուխտիս եռամեծի եւ քաջ փիլիսոփայի բազմերախտ հօրս մերոյ եւ վարժապետի Գէորգեա(յ)՝ արի եւ քաջ բարունապետի...: Այլ եւ գրեցաւ սա ի թվականութեան հայկազեան տօմարիս յարեթականս տոհմի Ըձերորդի Կ եւ Ե յաւելորդի, ի դառն եւ յանրարի ժամանակիս... քանզի առ մեզ եղեալ մահ սաստիկ յեկեղեաց գաւառիս, զոր ո՛վ կարասցէ ընդ գրով արկանել զաղէտս տարակուսանացս: Այլ եւ գնացեալ անօրէն, բռնաւորն Սաղա

¹⁰ Ստանուորեան կը գրէ՝ «Սոյն վանուց շինութեան թուականին վրայ որոշ գաղափար մը չկրցայ կազմել, զրան ճակատը ԶԹ (909) թիւ մը միայն կայ» (Արեւելք, 1886, Թ. 85): ԶԹ (1460) թուականը արդէն հնութեանէ հետո է:

Ուսուֆ կոչեցեալ՝ վառեալ չարութեամբ եւ մտեալ ի տունն Վրաց եւ առեալ զքաքաքն յԱղլձիսա եւ զամենեսեան առ հասարակ դարսն ի սուր սուսերի մաշեալ եւ զկանայս եւ զմանկունս գերի վարեալ...: Աղաչեմ յիշել զպանծալի եղբայրս մեր զյիմաստայեղձ փեսայն եկեղեցւոյ զՂազար բարունին եւ զհամշիրակ եղբայրն մեր զԹումա բանի սպասաւոր, որ զօրինակն շնորհեցին մեզ» (Ակիւնեան, Հաւաք. յիշատ. էջմ. 2074):

1389ին՝ ի վանս Կապոսի, որ ի ստորոտ լերինն Սեպուհոյ՝... ընդ հովանեաւ Ս. Յակոբայ կը գրուի փիլիսոփայութիւն մը (Սըրբատեան, Գեղարքունիք, էջ 411):

Ձէ կարելի հաւատեալ ըսել թէ Գէորգ վարդապետը Կապոսի առաջնորդութեան ղեկն իր ձեռքին մէջ ո՞ր ատեն առաւ, բայց կարելի է ենթադրել որ նա հոն նմանապէս ուսուցչութեամբ եւ դրականութեամբ զբաղեցաւ: Անոր մահը հանդիպեցաւ 1416ին¹¹ եւ մեծ սուգ առթեց ինչպէս Կապոսի միարաններուն, նաեւ Եկեղեաց գաւառի համայն ժողովրդեան: Անոր ներկայութիւնն այդ շրջաններուն հարկաւոր էր: Ծանր էին օրերը: Յիշատակագրութեան մը մէջ կը կարդանք. «Աւետիք աշակերտ բանի ի Դարանաղեաց գաւառէ ի վաղուց հետէ փափաղեալ ըզձայի այսմ վայելուչ... Աստուածաշունչ հին եւ նոր կտակարանացս. իսկ ի վախճանել հոգելից եւ տիեզերահռչակ մեծ բարունապետին իմոյ եւ վարժապետին ժառանգեաց զսա եղբորորդի նորին (Գէորգ վ. ի) Եզեկիէլ սարկաւազ եւ կամեցեալ նորա վաճառել, որ եւ ես անձեռնհաս էի եւ անարժան, կամակցութեամբ եւ օժանդակութեամբ բազմերախտ հօրս իմոյ հոգեւորի տէր Սահակ կորովամիտ բանասիրի եւ երաժշտապետի... տեսեալ զտենջանս իմ առ այս անգին մարդարիտս օգնական եղեալ յորդորեաց զմեզ որ եւ վաճառեալ զամենայն ինչս մեր, զոր ունէաք ի նախնեաց եւ յազգականաց եւ ինդութեամբ ստացաք զայս. լուսատու մարդարիտս եւ զաստուածային գանձս: Արդ որ ժառանգէք զսա յետ մեր... յիշման արժանի արարէք մանաւանդ ի բարին մանաւանդ գերջանիկ վարդապետն մեր զԳէորգ լուսահո-

¹¹ Այս թուականին Կապոսի մէջ Գրիգոր գրէ Յակոբայ Տաթևացիին Քարոզգրքը կ'արտադրէ (Նոտարք, էջ 47. Կարենեան, Յուլ. Բ. էջմ. Թ. 2069): Նոյն տարւոյն Յովհաննէս Ս. Յակոբ Եկեղեցւոյն հովանիին ներքեւ կը գրէ Մաշտոց մը, որ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյն կը նուիրուի (Լոյս, 1905, էջ 141):

զին եւ զուսուցիչն իմ գտէր Սահակ եւ զարեամբ նահատակեալ հայրն իւր զՍեղբեստորոս քահանայն եւ ստացաք զամենագով Աստուածաշունչս ի թուականիս Հայոց ՊՉԳ. ի դառն եւ ի դժնեայ ժամանակիս, զի մեծ պատուհաս պատահեցաւ Եկեղեցեաց գաւառիս... եկն տէրն Ամթայ ի վերայ Եզեկիս եւ հրդեհեաց զգեղաւանսն առհասարակ եւ զվանօրայս, ընդ որ հռչակելի մենաստանս մեր Կապոսի վանքս հրդեհեալ այրեցաւ եւ երեք ամ (ՊԿԷ—ՊԿԸ) ի խոտար պահեաց զքաղաքն եւ առեալ ապա խաղաղացոյց եւ խնամօքն Աստուծոյ սկիզբն եղեւ շինութեան գաւառիս, որ եւ մեք ողորմութեամբն Աստուծոյ նորոգեցաք զսուրբ անապատս պայծառ շինուածով առաւել քան զառաջինն. զժամատունն եւ զխցերն եւ զանտեստունն եւ զայլ ամենայն շինուածսն» (Նօտարք, էջ 79—80):

Դժբախտարար այս յիշատակագրութեան մէջ չէ տրուած անունը այն առաջնորդին (զուցէ Սահակ կամ Սարգիս), որուն օրով Կապոսի վանքը հրճիւք ու քարուքանդ եղաւ: Բայց այդ անունուն առաջնորդը կորովաշատ ու աննկուն անձ եղած է: Նա չէ խոնարհած տառապանքին ու աւերին առջեւ: Այլ առաջին առթիւ նորոգութեան ձեռնարկած եւ յաջողութեամբ զայն գլուխ հանած:

Այս վերականգնուած վանքին մէջ է որ 1431ին Սիմէոն ցանկացող կ'ըլլայ «Աստուածաշունչ գրոց» (Macler, Rap. d'une miss scient. en Belgique... էջ 114—115):

Նմանապէս հոս է որ Յովհաննէս Համչէնցին Ներսէս առաջնորդի օրով իր հմտութեամբն ու համբաւովն աշակերտներու հոյլ մը իր շուրջը կը համախմբէ: Անոր վրայ հիացողէ մը՝ Գրիգորէ են հետեւեալ կարեւոր տողերը. «Արդ ես Գրիգոր Տարնեցի ի վանացն Գլախայ, ուր ամփոփեալ կայ նըխարքն Յովհաննու Մկրտչին: Եւ ցանկացայ իմաստութեան եւ առի զհամբաւ Յովհաննէս քաջ բարունապետին, որ է աշխարհաւ Համչէնցի ի թագաւորական ազգէ, եթէ նըտեալ կայ ի գաւառն Եկեղեաց ի դրունս սուրբ Յակոբին եւ ունի աշակերտք բազում եւ ուսուցանէ հանգոյն նախկին վարդապետաց եւ ես յուղի անկեալ եկա(յ) եւ մտի ի համալսարանս նորա եւ նստա(յ) ի յունկնդրութիւն աստուածային իմաստութեան, զոր աւր ըստ աւրէ պատմէր հոգեւոյն սրբով եւ տպաւորէր ի միտս աշակերտացն եւ յետ



ամի միոյ հրաման ծառայիս իւրոյ եւ իմ նըստեալ գրեցի զլուծումն աստուածիմաստ տառիս Դիոնիսիոսին ի վայելումն իւր եւ ծնողաց իւրոց: ... յիշեսցիք ի մաքրափայլ յաղաթս ձեր ստացող սորին զՅովաննէս քաջ բարունին եւ զհայր աստուածային բանին եւ զի զարդարեալն իմաստութեամբն տեսականան եւ գործնականան եւ զծնաւզան իւր ամէն: ... Արդ գրեցաւ ԼԾ. այս ի թվականիս Հայոց ԶԼԸ (1489) ընդ հովանեաւ սուրբ Յակոբին եւ սուրբ Սիոնին եւ յառաջնորդութեան տէր Ներսէսին, որ սիրող է դասատան եւ պահէ յաւատութեամբ...¹² (Ակինեան, Հաւաք. Յիշատ. էջմ. 55):

Համչէնցիի հետ Կապոսի մէջ կը փոյլէր նաեւ Յրնեցին: Հոն ուսած եւ գործած են նաեւ Աստուածատուր, Հայրապետ եւ Պետրոս Պիչուզ, բայց վանքին պատիւ չէ եղած Որոգայթ անառակ վարդապետը (Գր. Դարանազցի, Ժամանակագրութիւն, էջ 341, 405—407):

1489ին «ի սուրբ ուխտս Կապոսի ձեռամբ Սարգիս արհի վարդապետի Անիձորացոյ ի խնդրոյ աստուածասէր առն Մարտիրոսի» կը գրուի Աւետարան մը (Հանդ. Ամս. 1894, էջ 51—52): Քանի մը տարի յետոյ 1496ին ձեռագիր մը կը գրուի՝ «ի գաւառն Եկեղեաց ի դրունս սուրբ Յակովբայ եւ Սիոնի, որ մականուամբ Կայիփոսի վանք կոչի, ի համալսարանս Յովհաննէս քաջ բարունուն, որ աշխարհաւ Համչէնցի, յառաջնորդութեան նոյն ուխտի տէր Ներսէսի որդոյ խոճա Ասարպէկի» (Ակինեան, Հաւաք. Յիշատ.): Սոյն թուականին¹³ Հայրապետ Սաղմոսարան մը կը գրէ Կապոսի մէջ (Սրուանձտեանց, Թորոս Աղբար Բ., էջ 305) եւ Եգեկիէլ ուրիշ գիրք մը. «Գրեցաւ սուրբ տառս, որ կոչի Քահանայաթաղ եւ քահանայաւրհնէք, հիմնարկէք եւ եկեղեց-

¹² Միւսնոյն Գր. Տարոնացիէն են հետեւեալ տողերը՝ «Արդ գրեցաւ եղանակաւոր տառս որ կոչի Մանրուսում եւ Տոնացոյց, ձեռամբ մեղապարտ եւ անիմաստ Գրիգորիս Տարանացոյ ի վանացն Ամլուրդոյն, որ մեայն անուամբ կոչեցայ արեղայ, ի գաւառս Եկեղեաց որ ասի Եգնիկայ, ի դրունս սուրբ Յակոբին որ Կայիփոս վանք կոչի, ընդ հովանեաւ սրբոյն Յակոբայ եւ սուրբ Աստուածածնի եւ սրբոյն Գեորգոյ ի թվ. Հայկազան տումարի ԶԼԹ (1490)... այլ եւ յիշեսցիք զառաջնորդ սուրբ ուխտիս զՆերսէս արեղայն եւ զՅովաննէս արեղայն յաղաթս...» (Ակինեան, Հաւաքածոյ Յիշատակարանաց, Երուսաղէմ, Յուլ. Սաւալանեան, Թ. 1738):

¹³ Մէկ տարի յառաջ՝ 1495ին Սաչատուր արեղան «ի յանապատս որ կոչի Կապոսի» Ոսկեփորիկ մը կ'արտագրէ (Սարգիսեան, Յուլայի, Բ., էջ 622 եւ Բագմալէպ, 1942, էջ 57):

